

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱՍՏԱՐԱՆ

**ՆԱՅԱՍՏԱՆ - ԲՈՒՂԱՐԻԱ.
ԱՆՅՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

Գիտաժողովի զեկույցների ժողովածու

ԵՐԵՎԱՆ

ԵՊՆ ՆՐԱՏԱՐԱՄԿՉՈՒԹՅՈՒՆ

2009

Նայ-բուլղարական համագործակցությունն անհրաժեշտորեն թելադրված էր մի շարք հանգամանքներով:

Նախ, ակնհայտ էր 19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան լծի դեմ բուլղար ժողովրդի մղած պայքարի անմիջական ազդեցությունը հայոց ազգաբնակչության վրա՝ ինչպես ազգաբնակչության գաղափարների քարոզչության, այնպես էլ՝ ազգաբնակչության պայքարի կոնկրետ ձևերի ընտրության առումով: Ըստ որում, վերջին հարցում կային էական ընդհանրություններ: Նայ ազգաբնակչության ուժերը հաճախ էին կիրառում պայքարի այն ձևերը, որոնք մինչ այդ արդեն փորձարկվել էին բուլղար ժողովրդի կողմից:

Երկրորդ, թե՛ Նայկական և թե՛ Մակեդոնական հարցերը միջազգայնացված էին և Բեռլինի վեհաժողովին հաջորդած փարիսերին իրադարձությունները դրանց շուրջ ընթանում էին գրեթե նույն սցենարով:

Երրորդ, հարկապես 1890-ականների կեսերին՝ արևմտահայերի զանգվածային ջարդերի պայմաններում, Բուլղարիայի քաղաքներում՝ ի հաշիվ արևմտահայ փախստականների, էապես մեծանում է հայերի թիվը: Դա ոչ միայն նպաստում է երկու ժողովուրդների մերձեցմանը, այլև՝ անխուսափելի դարձնում Արևմտյան Նայաստանի և Մակեդոնիայի ազգաբնակչության զբաղվող քաղաքական ուժերի շփումները՝ օրակարգում դնելով նաև հնարավոր համագործակցության հարցը:

Բնական է, որ աշխարհաքաղաքական պարտադրանքներով բացառվում էր հայ-բուլղարական իրական համագործակցությունը Արևմտյան Նայաստանում: Եթե քարոզչական համագործակցության հիմնական ասպարեզ դարձան Արևմտյան և Կենտրոնական Եվրոպան, որտեղ հայկական և բուլղար-մակեդոնական կազմակերպությունները հաճախ սատարում էին միմյանց կամ աշխատում միասնաբար ներկայացնել երկու դասերը, ապա զինական և գործնական այլ համագործակցությունը սահմանափակվում էր Բուլղարիայի, Օսմանյան կայսրության եվրոպական մասի և Կ.Պոլսի շրջանակներով:

Ներաբերքության առարկա ժամանակահատվածում հայ-բուլղարական զինակցությունն առավելապես դրսևորվել է բուլղար-մակեդոնական կազմակերպության և ՎՅԴ-ի համագործակցության փաթեթավորումով: Ըստ որում, փարիսերի ընթացքում այն հիմնականում ունեցել է հետևյալ դրսևորումները.

1. Բուլղար-մակեդոնացի հեղափոխականների կողմից զինամթերքի՝ առավելապես ռումբերի և պայթուցիկների մատակարարում ՎՅԴ Կ.Պոլսի կառույցին:

2. Կ.Պոլսում համարել խոշոր ձեռնարկ կազմակերպելու նպատակով երկու կազմակերպությունների միասնական ջանքեր:

ՆՈՎ ՆԱԿԱԿԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԶԻՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՄԿՁԲԻՆ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության դեմ ծավալված հայ ազգաբնակչության զինյալ պայքարն ընթանում էր արտաքին և ներքին անբարենպաստ պայմաններում: Օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք հանգամանքների պարզառով հնարավոր չէր ավելի իրական դաշնակիցներ գտնել Արևմտյան Նայաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների շրջանում: Այդ պարզառով հայ ազգաբնակչության պայքարը ղեկավարող ուժերը հարկադրված էին ոչ միայն ակնհայտ փոքրությունների աջակցությունը, այլև հնարավոր դաշնակիցներ որոնել բուն Արևմտյան Նայաստանից դուրս՝ Օսմանյան բռնապետության դեմ պայքարող այլ ժողովուրդների շրջանում: Նման դաշնակից դարձավ թուրքական լուծը նոր թոթափած բուլղար ժողովուրդը, որը շարունակում էր պայքարը օսմանյան փրկապետության փակ գրավող Մակեդոնիայի ազգաբնակչության համար:

3. Նայ-բուլղարական հայրուկային խառը խմբերի գործունեություն Օսմանյան կայսրության եվրոպական տարածքում:

4. Մերոյ համագործակցություն՝ ազատամարտի ռազմաֆինանսական բազայի հետ կապված խնդիրները լուծելու նպատակով:

5. Բուլղար-մակեդոնական կազմակերպության աջակցության շնորհիվ հայ ազատագրական ուժերի համար Բուլղարիայում գործունեության անհամեմատ ազատ պայմանների ստեղծում: Դա դրսևորվում էր հայերին զինավարժությանը զբաղվելու հնարավորություն տալու, հայ հեղափոխականների համար ռումբերի ու պայթուցիկների փորձարկումների համար բարենպաստ պայմաններ ապահովելու, բուլղարական զինվորական հաստատություններում նրանց սովորելու հնարավորություն տալու մեջ:

Բերենք մի քանի օրինակներ այդ համագործակցության առավել նշանակալից էջերից:

Բուլղար-մակեդոնական շարժման հետ ՆՅԴ քաղաքական շփումներն սկսվել էին Եվրոպայում՝ «Դրոշակ»-ի խմբագրության միջոցով: 1895 թ. կեսերին նման շփումներ եղան նաև Կ.Պոլսում: Դրանք մի քանի ամսվա բանակցությունների արդյունքում վերածվում են դաշինքի: Այն ՆՅԴ-ին հնարավորություն էր տալիս սուլթանական բռնապետության դեմ պայքարում առաջին անգամ օգտագործել նոր ու ազդեցիկ այնպիսի զինամիջոցներ, ինչպիսիք էին դինամիտը, ուժանակն ու ռումբերը:

Դեռևս 1895 թ. հունիսի 8-ին ՆՅԴ Կ.Պոլսի կազմակերպության ղեկավար Ն. Յուսուֆյանը (Մելիք) «Դրոշակ»-ի խմբագրությանն ուղղված նամակում հայտնում է բուլղար-մակեդոնական կազմակերպության ներկայացուցչի հետ ունեցած հանդիպման մասին: «Բուլղարներու ներկայացուցիչը երկու օր է հոս եկած է յարկապես մեզ հետ բանակցելու համար, գրում է Յուսուֆյանը,- Անոնք կուզեն գործել դինամիտով և մեր գործակցութիւնը կուզեն: Մենք տակաւին... վերջնական համաձայնութիւն չտուինք: Եթե համաձայնինք, պէտք է միաժամանակ գործենք Պոլիս և Մակեդոնիա: Կարծես թե այդի համաձայնինք...»¹ Նույն տարվա հուլիսի 25-ին գրված նամակում՝ հայտնելով հիշյալ կազմակերպության հետ պաշտոնական բանակցություններն ավարտելու մասին, Ն. Յուսուֆյանը ներկայացնում է կնքվելիք պայմանագրի բովանդակությունը, մասնավորապես նշելով, թե. «Նոս կուզեն մեզի ձգել, իրենք կը խոստանան ինչքան պէտք է մեզի հայթայթել (խոսքը դինամիտի մասին է - Ն.Գ.) և կը փափաքին, որ շուտով սկսինք... Նոս ինչ-որ ընենք այդ ուղղութեամբ, երկուքիս անունով պիտի ըլլայ, իսկ իրենցը՝ իրենց անունով, բայց արդեօք մի այսպիսի միացեալ գործունեութիւն մը մեր դատին արդի պայմաններու մեջ օգ-

տակա՞ր թէ վնասակար կրնայ ըլլալ: Մենք սկզբունքով համաձայնած ենք, բայց միայն կը վախնանք թէ վնասենք, փոխանակ օգնելու...»² Բայց, հետագա շարքերի ընթացքում համագործակցության նպատակահարմարության վերաբերյալ կասկածները փարատվում են: Ստացվում է նաև ՆՅԴ ղեկավար մարմինների համաձայնությունը: Մեպտեմբերի 9-ին Ն. Յուսուֆյանն արդեն հայտնում է դինամիտի առաջին խմբաքանակի ստացման և պայմանագրի շուրջ վերջնական համաձայնության գալու մասին:³ Մեպտեմբերի 21-ի նամակում, որը գրվել է Բար Ալիի ցույցից հետո՝ Կ.Պոլսում ստեղծված ժանր իրադրության պայմաններում, Յուսուֆյանը հայտնում է. «Վճռած ենք մակեդոնացիներու հետ ռումբ տրինամիտի դիմել...»⁴ Մի քանի օր անց՝ սեպտեմբերի 26-ին նա ոչ միայն հայտնում է մեծ քանակությամբ ուժանակ և ռումբեր ստանալու մասին, այլև, ըստ էության, առաջին անգամ առաջ քաշում Կ.Պոլսում ռումբային կոիվներ սկսելու գաղափարը՝ դա համարելով օրհասական վիճակում գտնվող հայության փրկության ելքը: Ի դեպ, այդ գաղափարն է, որ հետագայում ընկավ Օսմանյան դրամատրան գրավման ծրագրի հիմքում: Թեև 1896 թ. գարնանը Կ.Պոլսի ՆՅԴ կառույցը կարողանում է սեփական ուժերով լուծել ռումբեր պատրաստելու խնդիրը, այնուհանդերձ, բուլղարացի հեղափոխականների օգնությամբ զինամթերք ու պայթուցիկներ ձեռք բերելու և Կ.Պոլիս փոխադրելու գործընթացը շարունակվում է նաև հետագա տարիներին՝ հարկապես մեծ չափեր ընդունելով 1904-1905 թթ.՝ սուլթան Աբդուլ Նամիդի նկատմամբ 1905 թ. հուլիսին կազմակերպված անհաջող մահափորձին նախորդած շրջանում:

Բուլղար հեղափոխականների հետ ՆՅԴ համագործակցությունն առավել սերտանում է 1898 թ. սկսած, երբ Ֆիլիպպոպոլիս (Պոլովդիվ) քաղաքում հաստատվում և այնտեղ մասնավոր վարժարան է հիմնադրում ՆՅԴ ղեկավար գործիչներից Ռոստոմը (Մր. Զորյան): Իր ձեռքը վերցնելով ՆՅԴ Բալկանյան կառույցի ղեկավարությունը, նա կարճ ժամանակամիջոցում սերտ կապեր է հաստատում բուլղար-մակեդոնական կազմակերպության մի շարք ղեկավար գործիչների հետ, որոնց թվում էին Բ. Սարաֆովը, Լյապովը, Մինկովը, Թյուֆեկչիևը, հայրնի հրապարակախոս Ս. Ռադելը և ուրիշներ: Վերջիններիս անմիջական աջակցությամբ հաջողվում է կապեր հաստատել նաև Բուլղարիայի պետական բարձրաստիճան գործիչների, այդ թվում՝ վարչապետ Պետրկովի, գեներալ Սավովի, Ն. Գեևադիևի և այլոց հետ:⁵ Շնորհիվ դրա, ոչ միայն նպաստավոր պայմաններ են ստեղծվում Բուլղարիայի հայ համայնքի բնականոն կյանքի և Բուլղարիայում հայ հեղափոխականների գրեթե ազատ գործունեության համար,

այլն առավել սերտանում են ՆՅԴ-ի և մակեդոնական կազմակերպության կապերը, ի հայտ գալիս համագործակցության նոր ձևեր:

Բուն Բուլղարիայում այդ համագործակցության շահավետ կողմերից մեկը մարմնամարզական և զինավարժական խմբերի ստեղծումն էր: Մինչ այդ հայերը Բուլղարիայում զինավարժությամբ զբաղվում էին գաղտնի: Ռոստոմի ջանքերով նախ Ֆիլիպոպոլիսում, ապա Բուլղարիայի մյուս քաղաքներում մարմնամարզական ընկերություններին կից ստեղծվում են զինավարժական կամ նշանառության խմբեր: Դրանցում մակեդոնական կազմակերպության անդամ բուլղարացի սպաների ղեկավարությամբ հայերն ազատ զբաղվում էին զինավարժությամբ՝ քանի դեռ կառավարությունը չէր արգելում:⁶ Այդ խմբերը հնարավորություն էին տալիս կռվող ուժեր պարբերաբար՝ հեղափոխություն, հարկ եղած պահին, դրանք երկիր ուղարկելու համար:

ՆՅԴ Արևմտյան բյուրոյին ուղղված Ռոստոմի նամակները վկայում են, որ 1899-1900թթ. ՆՅԴ-ն և բուլղար-մակեդոնական կազմակերպությունը համագործակցել են Կ.Պոլսում համալուծող ձեռնարկ իրականացնելու համար: Այդ ձեռնարկը, որի մանրամասներն այսօր էլ անորոշ են, ըստ երևույթին անկարար է մնացել միջոցների պակասի և ՆՅԴ Կ.Պոլսի պարասխանարքու մարմնի անդամ Գարեգին Խաժակի ու բուլղարացի հեղափոխականների ձեռքբերվածության պատճառով:⁷

Այդուհանդերձ, հայ-բուլղարական զինակցությունը թրծվեց նաև ռազմի դաշտում՝ ի դեմս Ադրիանապոլսի մոտ թուրքական զորքերի դեմ հայ-մակեդոնական հայդուկային խմբի մղած ճակատամարտի: Դա տեղի ունեցավ հեղափոխական հանգամանքներում: Նախորդ դարակազմին ՆՅԴ-ն և բուլղար-մակեդոնական կազմակերպությունը զգում էին դրամական միջոցների սուր կարիք, ինչը նրանց թույլ չէր տալիս կյանքի կոչել նախապես ծրագրված մարտավարական կարևոր խնդիրները: Նման պայմաններում ազատամարտի համար անհրաժեշտ միջոցների ձեռք բերման «կես խաղաղ» միջոցներից մեկը դառնում է Թուրքիայի եվրոպական փարածքներում իրականացվող բռնի հանգանակությունը: Բուլղար-մակեդոնական կազմակերպությունն այդ հարցում արդեն փորձ ուներ և Ռոստոմի միջոցով ՆՅԴ-ին առաջարկում է համագործակցել: Առաջարկությունն ընդունվում է: 1900 թ. հունիս-հուլիսին հայ-բուլղարական վեց հոգանոց հայդուկային խումբը (3 հայ, 3 բուլղար-մակեդոնացի) հաջողությամբ կատարում է առաջադրանքը: Խմբի ձեռք բերած շուրջ 13000 ֆրանկը (10.650 բուլղարական լև) չի բաժանվում և մնում է երկու կազմակերպությունների փրամադրության փակ՝ Կ.Պոլսում նրանց ընդհանուր կարիքների համար:⁸

Ցավոք, մեկ փարի անց կազմակերպված նույնանման արշավանքը հաջողություն չի ունենում: 1901թ. հուլիսին հայ և բուլղար-մակեդոնացի 10 հայդուկներից կազմված խմբի փորձը՝ մտրակա ազարակներից մեկից առևանգելու Ադրիանապոլսի վայրին, ձախողվում է: Վերջինս ընդամենը կես ժամ առաջ հեռացել էր ազարակից: Ձեռնարկը վերածվում է շուրջ 1500 զինվորների և երկու թնդանոթների դեմ հայդուկային փոքրիկ խմբի մղած չորս ժամյա անհավասար, բայց դյուցազնական մարտի: Պայքարելով մինչև վերջին փամփուշտը՝ հայդուկներից վեցը (երեքական հայ և բուլղար-մակեդոնացի) նահապարկվում են, մնացած չորսը (երկու հայ, երկու բուլղար-մակեդոնացի)՝ գերվում: Թշնամու կորուստները հաշվվում էին փասկյակներով: Ահաբեկված իշխանությունները շփարկում են կասեցնել հայ-մակեդոնական զինակցության հեղափոխ խորացումը: 1901թ. դեկտեմբերի 9-ին գերված չորս հայդուկները՝ Պետրոս Սերենճյանը (Բուլղարացի Պետր), Օննիկ Թորոսյանը, Սվետոսլավ Մերջանովը և Խրիստո Նաջի Իլինը, Ադրիանապոլսի չորս հրապարակներում կախաղան են բարձրացվում:⁹ Բայց Ադրիանապոլսի կախաղանները, որոնք մեծ հուզում առաջ բերեցին հայկական ու բուլղարական շրջաններում և ունեցան միջազգային արձագանքներ, ավելի ընդգծեցին երկու ժողովուրդների դաշինքի ամրությունը և նրանց դարձրին ընդհանրությունը:

Որոշ պարզաբանումներ փանք նաև հայոց ազատամարտի նկատմամբ բուլղարական իշխանությունների վերաբերմունքի մասին: Մակեդոնական կազմակերպության հետ ունեցած իր ոչ դյուրին հարաբերությունների և թուրքական իշխանությունների անդադար բողոքների պատճառով Բուլղարիայի իշխանությունները երբեմն-երբեմն խստություններ էին գործադրում նաև հայ հեղափոխականների նկատմամբ, բայց վերջիններիս հանդեպ վերաբերմունքն ընդհանուր առմամբ բարյացակամ էր: Դա պարզորոշ դրսևորվում է Աբդուլ Նամիդի մահափորձին նախորդած ամիսներին: Մուլթանի համար նախապեսվող ձեռնառումների փորձարկումները կատարվում էին Բուլղարիայում: Երբ 1904թ. աշնանը այդ փորձարկումները կատարող չորս հայ հեղափոխականներ (Մարգիս Բարսեղյան, Նամբարձում Աղաջանյան և ուրիշներ) Վառնայում ռումբերը ձեռքներին ձեռքակալվում են, բուլղարական իշխանությունները, հաշվի առնելով առաջացած աղմուկը, բավարարվում են նրանց ձևականորեն արտաքսելով Սերբիա՝ միաժամանակ հնարավորություն փակելով այլ անուններով եր վերադառնալ և շարունակել աշխատանքները: Նույն վերաբերմունքը դրսևորվում է նաև 1905թ. մարտին, երբ ձեռնառումի փորձարկման պահին զոհվում են Քրիստոփոր Միքայելյանը և Վոսմաչյանի Քենդիրյանը: Այդ առիթով ոչ միայն

դար չի բացվում, այլևս նստիկանությունը Ք. Միքայելյանի հյուրանոցային համարը խուզարկում է միայն այն բանից հետո, երբ վաղօրոք այնտեղից փառվել էին բոլոր փաստաթղթերը և կարևորություն ներկայացնող իրերը:¹⁰ Ավելին, իշխանությունների լուս համաձայնության պայմաններում նահապետական գործիչների հուղարկավորությունը վերածվում է երկու ժողովուրդների բարեկամության աննախադեպ ցույցի:

Բուլղարական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի դրսևորումներից մեկն էլ աջակցությունն էր հայ զինվորական կադրերի պարտաստման գործին: Մակեդոնացի հեղափոխականների աջակցությամբ, որպես առաջին քայլ, Բուլղարիայի բարձրագույն զինվորական վարժարանում կրթություն են ստանում մի քանի հայ երիտասարդներ, որոնց վիճակված էր կարևոր դեր խաղալ ազապագրական պայքարում (Գարեգին Նժդեհ, Թուրցիկ Գևորգ և ուրիշներ): 1906թ. Բորիս Սարաֆովի աջակցությամբ Դուբնիցայի շրջանում՝ բուլղարա-թուրքական սահմանի մոտ, հիմնվում է ՀՅԴ գաղտնի զինվորական դպրոցը: Բուլղարական բանակի հարյուրապետ Պողոս Պողոսյանի գլխավորությամբ շուրջ 80 հայ երիտասարդներ ստանում են զինվորական զիպեյիքներ՝ նախապես պարտավորվելով հեղափոխության գործել Երկրում: Թուրքական իշխանությունների բողոքների պատճառով 1907թ. դպրոցը փակվեց, բայց այն կարևոր դեր խաղաց ազապագրական պայքարի համար զինվորական կադրեր պարտաստելու գործում:

Որպես ամփոփում, նշենք, որ բուլղարական մակեդոնական հեղափոխական կազմակերպության հետ հայ հեղափոխականների սերտ դաշինքը, Բուլղարիայում բնակություն հաստատած հայերի և հայ ազապագրական պայքարի նկատմամբ բուլղարական իշխանությունների համակրական վերաբերմունքը այն վճռորոշ հանգամանքներն էին, որոնք ապահովեցին հայ-բուլղարական զինական համագործակցության առավել բարձր մակարդակը Բալկանյան պարերազմների փարիներին՝ ի դեմս բուլղարական բանակի կազմում Նժդեհի և Անդրանիկի գլխավորությամբ գործող հայ կամավորների վաշտի:

Իսկ ավելի քան մեկդարյա իրադարձություններից մեզ մնացած գլխավոր դասն այն է, որ մրավորական հայդուկներ Բուլղարացի Պեպոյի, Սվեպոպավ Մերջանովի և նրանց ընկերների նահապետական պրեագործված հայ-բուլղարական բարեկամությունը երկու ժողովուրդների ազգային-քաղաքական և պետական գործիչներին պարտադրում է իրենց ժողովուրդներին դեպի ապագա առաջնորդելիս երբևիցե չանտեսել պատմական անցյալի իրողությունները:

1. Դիան Ն. Յ. Դաշնակցության, յավելված «Նայրենիք» ամսագրի, խմբ. Միմոն Վրացեանի, Պոսթըն, 1934, հ. 1, էջ 238:
2. Դիան Ն. Յ. Դաշնակցության, հ. 1, էջ 240:
3. Տե՛ս նույն փեղում, էջ 242:
4. Նույն փեղում, էջ 246:
5. Տե՛ս Վարանդեան Մ., Ն. Յ. Դաշնակցության պարմութին, Երևան, 1992, էջ 216-217:
6. Տե՛ս Նիթեր Ն.Յ. Դաշնակցության պարմութեան համար (Այստեղն է՝ Նիթեր...), խմբ. Հրաչ Տասնապետեանի, Բ. հապոր, Բ. փապարտութին, Պէյրութ, 1985, էջ 154:
7. Մանրամասն փե՛ս Ռոստոմ, Նամակակի, մահուան ութսունամեակին առթիւ, խմբ. Հրաչ Տասնապետեանի, Պէյրութ, 1999, էջ 151, 165-166, 221-223, 232-233:
8. Մանրամասն փե՛ս նույն փեղում, էջ 208, 216, 218, 220, 231, 271:
9. Մանրամասն փե՛ս Ռոստոմ, Նամակակի, մահուան ութսունամեակին առթիւ, էջ 253, 256-258, 261-263, 270-271:
10. Տե՛ս նույն փեղում, էջ 391: Նույնը՝ Նիթեր..., Բ. հապոր, էջ 335: